


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ՏՅԵՒԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԻՅԵՒՆ**

Մարդկային կեանքը կայուն չէ, այլ փոփոխական. ան իր քառասուն, նախնական և անկազմակերպ վիճակէն սկսեալ միշտ դէպ ի աւելի բարդ, կարգաւորեալ և ներդաշնակ վիճակ մը՝ տեւականօրէն նոր պայմաններու անվերջ շարք մը՝ երեւան բերած է: Կրօնքը նաեւ՝ մարդկային կեանքի էն կարեւոր երեւոյթներէն մէկը՝ ենթակայ է այս տիեզերական կանոնին: Ոչ թէ միայն աշխարհի ընդհանուր կրօնական կեանքը, այլ նաեւ ոեւէ կրօնք մը կամ նոյն կրօնքին ոեւէ ժողովուրդի մը մէջ որոշ ձեւով արտայայտութիւնը՝ պատմութեան տարբեր շրջաններուն մէջ զարգացման տարբեր աստիճաններու վրայ գտնուած և նոր երեւոյթներով յայտնաբերուած է: Կեանքի ոեւէ մէկ մարդին մէջ մարդիկ միշտ հարկադրուած կ'ըլլան լուծելու հինի և նորի մշտագոյ հարցը: Պատմութեան մէջ երբեք կարելի եղած չէ կեանքը որոշ, հաստատ կաղապարեալ ձեւի մը մէջ տեւականօրէն պահել: Այն բոլոր յամառ և անխոհեմ ջանքերը որոնք յանդգնած են կեանքը այսպիսի վիճակի մը վերածել՝ պատճառ եղած են կամ կեանքի ոչնչացումին և կամ անոր անբնականօն և կործանարար ընթացքի մը հետեւելուն: Անկարելի է եռացող, թարմ, նոր երեւոյթներով յայտնուող

կեանքը «հին տիեզերու» մէջ պահել: Բրիտտոնէութիւնը, բղխած Յիսուսի կեանքին մշտահոս աղբիւրէն, անկարելի էր պահել հրէութեան աւանդապաշտ, ծիսապաշտ, զրապաշտ և մեքենական հաստատ կաղապարներուն մէջ: Ապատութեան անպարտելի ախտեան Ս. Պօղոսին կը պարտինք երուսաղէմի առաջին եկեղեցական ժողովին մէջ տրուած այն մեծ պատմական որոշումը՝ որուն համեմատ քրիստոնեաները պատ կը թողուին Բրիտտոսի կեանքը արտայայտելու իրենց ինքնատիպ և ուրոյն կերպերովը, հարկադրուած չըլլալով զայն ապրիլ հրեայ քրիստոնեաներու ըմբռնումին և սովորութիւններուն համեմատ: Յիսուսի խաչելութենէն հազիւ 20 տարի վերջ պատահող այս պատմական ափը, յառաջդիմական մեծ քայլ մըն էր առնուած մանուկ եկեղեցիին կեանքին մէջ: Երբ նոր պայմաններ երեւան եկան՝ առաքելական եկեղեցին իմաստութիւնը ունեցաւ հռչակելու թէ զարեբու գործածութեամբ նուիրագործուած կարգ մը ըմբռնումներ և սովորութիւններ ա'լ անպէտ են քրիստոնեաներու համար:

Բրիտտոնեայ եկեղեցին այս ոգիին միշտ հաւատարիմ չէ գտնուած: Այն ջանացած է յարափոփոխ, յարաճուն կեանքը մեքենական դարձնել: Մարգարէական շունչէ զրկուած իր աչքերը զոյգեց նոր լոյսի, նոր տեսիլքի, նոր պատգամներու: Ան իր կարգ մը ընկալ-

հալ ըմբռնումները եւ սովորութիւնները անփոփոխելի եւ վերջնական նկատելով զարգացումի կարելիութիւնները խափանեց: Բայց կեանքը կը շարժէր, որ քիչ վերջը ուժգին թափով մը պիտի պոփկար՝ իր հեղիղանման հոսումին համար նոր ուղիներ բանալով: Եւ այսպէս սկսաւ ԺԶ. դարու եկեղեցական բարեկարգութիւնը:

Բարեկարգիչները իրենց կարգին ունեցան կարգ մը սխալներ, որոնցմէ մէկն էր իրենց ըմբռնումները, եկեղեցական կանոնները, զաւանանքը, սովորութիւնները նկատել իբր վերջնական ճշմարտութիւններ: Բարեկարգութիւնը սկսաւ բայց պէտք չէ որ ան դադրի: Եկեղեցին միշտ պէտք է բաց դուռ մը ձգէ կեանքի նոր պայմաններուն յարմարութիւնը համար, եթէ կ'ուզէ իր էնստունակութիւնը պահել եւ առաւելագոյն չափով բարեւար ծառայութիւն մը մատուցանել: Պէտք է ներկայ եկեղեցին առաքելական մանուկ եկեղեցիին իմաստութեամբ օժտուի, կեանքի նոր պայմանները նկատի առնելու համար: Բրիստոսի կեանքը անկարելի է միշտ նոյն կերպով արտայայտել, անոր խորհուրդները եւ ճշմարտութիւնները նոյն բառերով բացատրել: Քանի կեանքը կը յառաջանայ, քանի քրիստոնէական փորձառութիւնը կը խորունկնայ եւ կ'ընդլայնի, նոր բացատրութիւններ պէտք են զանոնք արտայայտելու համար, նոր մեթոտներ, սովորութիւններ պէտք են անոնց ձեռք մարմին տալու համար: Ներկայ քրիստոնէական զաւանանքներէն եւ եկեղեցական կազմակերպութիւններէն ոչ մէկը վերջնական եւ կատարեալ հանգամանք մը կը ներկայացնէ:

Հրեայ մարգարէները, Յիսուս, Պօղոս, եւ մինչեւ հիմա այլացեղ եւ այլադաւան մեծ քրիստոնէաներ, որոնք օժտուած էին կեանքի իրական վիճակը տեսնելու կարողութեամբ, հոգեւոր արժէքները գնահատելու թափանցող հայեացքով, եւ նոր տեսիլքի ընդունակութեամբ, ջանացեր են լճացեալ, մեքենական դարձած կեանքը կենսանորոգ շունջով մը ոգեւորել, ազատ թռիչք տալ իր աստուածաբաղձ հոգիին համար՝ վերյարմարելով զայն իր նոր պայմաններուն: Պէտք է բարեփոխութիւնը տեւական ըլլայ եւ ոչ թէ որոշ ատենուան մը համար:

Տ. Ժ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆՔ

Ա.

Կասկած չկայ թէ մեծ հաճոյք եւ գոհունակութիւն կ'զգանք երբ տեսնենք մարդ մը՝ որ բարի, իմաստուն, արդար, ճշմարտախօս, հաստատամիտ, իր խօսքին տէրը, լայնախոհ, պարկեշտ, անձնուրաց, մարմնով եւ նկարագրով զօրաւոր եւ ներդաշնակ մէկն է: Այսպիսի մարդ մը մարմնով եւ հոգով առողջ է եւ ամենուն կողմէ սիրուած, եւ բնութիւնը դէպի կատարելագործութիւն բաւական յառաջացած լինելով ինք իր մէջ երջանիկ է: Իրեն էութեան մէջ կենդանութիւն մը, սրբալին մէջ խաղաղութիւն մը, խղճին մէջ գոհունակութիւն մը եւ մտքին մէջ փայլունութիւն մը կայ: Պարտաճանաչ է եւ շարժումներուն մէջ մաքուր: Մտածմունքը, խորհուրդները եւ փափաքները միշտ բարձր են: Գեղեցիկ է, միաբան է, ամենուն կողմէ սիրուած է: Ուր որ ըլլայ ուրախութիւն կը ներշնչէ, նպատակը եւ շարժառիթը մաքուր, ազդեցութիւնը ամէն տեղ զօրաւոր, իրեն ազգին եւ ընտանիքին պատիւ կը բերէ: Հպարտ է ազգը իրեն այսպիսի զաւակներուն համար: Այսպիսի մէկու մը համար կ'ըսենք թէ բարձր բարոյականի տէր մարդ է: Ո՞վ չի գնահատել զինքը: Ո՞վ չուզեր որ ինքը, իր զաւակը, ընտանիքին բոլոր անդամները, ազգին երիտասարդները այսպիսի բարոյականի տէր ըլլան: Հոս չէ՞ մարդկութեան կատարելութիւնը: Սակայն ի՞նչ է, ո՞ւր է այս բարոյականութիւնով օժտուած կեանքին ակը: Ի՞նչպէս կրնանք ունենալ այս նկարագիրը, կեանքը: — Իմ փափաքս է ցուցնել սիրելի ընթերցողներուս թէ այս բարոյական աղբիւրը կրօնքն է:

Ի՞նչ է կրօնքը: Կրօնքը հաւատալ է թէ զերագոյն էակ մը կայ՝ որուն մենք պատասխանատու ենք, թէ հանդերձեալ կեանք մը կայ՝ որուն որպիսութիւնը հիմա մեր այն գերագոյն էակին հետ ունեցած յարաբերութեանէն կախեալ է: Հաւատալ թէ մարդը զիպուածի գործ եւ խաղալիք չէ, անոր վիճակը եւ գործերը կ'ազդեն այն բարձրագոյն միաբնի վրայ: Հոս սկսուած գործ մը մեր մահուամբ չի վերջանար: Ունինք պահապան մը, մեր

վրայ հսկող մը, որ մեզի եղած ֆլետսի հատուցում կուտայ: Բարութիւնը, անձնութեանը արժէք ունին իւր առջեւ, գեշութիւնը, մեղքը, չարութիւնը, յանցանքը ատելի են Իրեն: Մարդուն գոյութիւնը յարգելի բան մըն է Անոր քով: Նա անոր բարեկամը, օգնականը, յաւիտենական պարգեատուն է: Մարդը Անոր կը յուսայ, Անոր կը վստահի, զԱյն կը սիրէ, Անոր կ'աղօթէ, Անոր կը ծառայէ, զԱյն կը պաշտէ, և այլն: Ուստի՝ կրօնքը ի՞նչպէս կ'օգնէ մարդուն այն բարձր բարոյական կեանքը ապրելու: Ի՞նչ է կրօնքի ոյժը, աղգեցութիւնը, բարոյականութիւնը գոյացնելու և սնուցանելու և յառաջ մղելու համար:

Նախ՝ Կրօնքը խղճմանսկի սնունդն արժեք կուտայ: Կրօնքը՝ խիղճը կ'ստեղծէ: Ամեն մարդուն խիղճ և բարիքն և չարիքն մէջտեղի տարբերութիւնը տեսնել զիտէ: Սակայն այս խիղճը կեանք չունի երբ նա արդար Աստուծոյ չ'առնէ իր վստահութիւնը և հեղինակութիւնը: Մեր փորձութիւնները չափազանց զօրաւոր են: Ասոնք կ'ընեն խեղդել խղճի ձայնը, երբ այն ձայնը լոկ մեռնէ է, երբ ներքին օրէնքը մեռ օրէնքն է, երբ կը խորհինք թէ մեր օրէնքները մեռնէ ենք: Ո՛հ, խիղճը տրուած է մեզի առանձին կառավարելու համար: Անոր կապակցութիւնը գերազոյն էակին հետ է: Երբ խիղճը մեզի կը բերէ տիեզերքի ամենակարող Արարչին պատուէրը, անաչառ Դատաւորին հրամանը, Անոր հեղինակութիւնը տարբեր է: Երբ ճշմարտ և արդար ըսուածը իմ անձնական կամ իմ ընկերոջն զաղափարը չէ, այլ ամենուն Հօրը ձայնն է, անհուն Կամքին խօսքն է, անոր նշանակութիւնը տարբեր կ'ըլլայ: Իմ վրաս դրուած պարտականութիւնը անհուն և Սուրբ Աստուծոյ կամքը, պատուէրը, հրամանն է: Երբ այս հաւատքը ունենանք, այն ատեն խղճի ձայնը որոտումէն աւելի բարձր և ազդու կերպով կը գրգռէ մեր էութիւնը: Այն ատեն կ'զգանք թէ հնոցի մէջ կամ կայմին վրայ երջանկութիւն սպասել աւելի բանաւոր է քան սխալ բան մը ընելու կամ սիրելու մէջ: Այն ատեն ներքին ձայնը, ներքին լոյսը շատ աւելի զօրաւոր կ'ըլլայ:

Երկրորդ՝ Կրօնքը բարոյական բարեկարգութեան և յառաջդիմութեան զարգացման է: Անշուշտ

առաքինութեան ճամբուն մէջ կրօնքէ զատ ուրիշ օգնականներ կան—խիղճի ձայնը, պատուոյ փափաքը, ուրիշներուն գնահատումը, ուղղամիտ և բարի կեանքի ներկայ վարձատրութիւնը մեզ առաքինի ըլլալու կը մղեն: Սակայն՝ առանց Աստուածային մշտատեւ և թարմ ներշնչումի, մեզի համար կարելի չէ ներքին խորհուրդներու վրայ հսկել, անշահախնդիր և մաքուր և անձնութեան կեանքի համար բուռն փափաք ստածել, բարիք ընելու ճամբուն մէջ նեղութիւնը և չարչարանքը արհամարհել, հոգիին առողջութիւնը և յառաջդիմութիւնը ամէն բանէ վեր դասել: Այս մեծ դործերը յաջողցնելու համար պէտք եղած ոյժը մեզմէ չի բղխիր: Պէտք է մեր մէջը զգանք մեզմէ բարձրագոյն զօրութեան մը ներկայութիւնը, որպէս զի կարենանք դիմանալ փորձութեանց և չար օրինակներու հակառակ աղգեցութեանց: Աշխարհի դէմ մեր անվերջ պայքարը շարունակելու համար բարիքն յաւիտենական բարեկամին հետ անձնական յարաբերութիւն ունենալու ենք: Մեր մէջը յոյս մը մեզ մղելու է դէպի յաւիտենական կատարելութիւն, դէպի հանդերձնալ կեանքի երանութիւն: Եթէ ոչ, գիտենք թէ մեր բարի ըլլալու որոշումն ինքն ու խոստումները, և լոկ մարդասիրութեան գաղափարը արժէք չունին: Ինչպէս մեր չար ունակութիւնները մեզ դէպի վար կը ձգեն:

Ուստի հարցնելու ստիպողականութիւնը կ'զգամ թէ, արդեօք տիեզերքի մէջ չկայինձմէ բարձրագոյն ոյժ մը, որ զիս չար կիրքերու ալիքներէն վեր կրնայ վերցնել, չկայ մէկը որ զիս այս անվերջ պայքարին մէջ զօրացնէ: Կրօնքն է որ կը տանի մեզ այն Ոյժին, այն Վէմին, այն Օգնականին: Անորն է այդ անհուն զօրութիւնը, որ մեզ անսահման տիեզերքի և յաւիտենական կեանքի մէջ դէպի յառաջ կը տանի: Ան Ամենաբարիքն հաւատալով է որ, կ'զգամ թէ իմ հոգեւոր կատարելութեան հասնիլս երազ մը չէ, թէ օր մը կրնայ ան իրականութիւն ըլլալ: Յիսուսի քարոզած մաքուր կրօնքին աղգեցութիւնը մեզ մաքուր կը պահէ: Հաւատա՛ւ ասոր:

[Շարունակելի]

Կ. Յ. Յ.

ՄԱՐԴՈՒՆ ՓԱՓԱՔՆԵՐԸ

Մարդիկ ի՞նչեր կը փափաքին ունենալ, աւելի կամ նուազ սաստկութեամբ ոմանք բան մը, ուրիշներ ուրիշ բան մը կ'ուզեն, իսկ շատեր ալ կան որոնք չեն պիտի թէ ի՞նչ կ'ուզեն: Կարգ մը մարդերու փափաքները վաղանցիկ են, անոնք թիթեանիկի մը նման մէկէն միւսը կ'ոտոտտեն: Բայց ուրիշներ կան որոնք հաստատ, հանգարտ և ամենը իւրացնող փափաքներ ունին, թերեւս տիրակալն փափաք մը որ միւսները կը ծծէ, կը լուծէ, և մարդուն բոլոր ոյժերը կը պահանջէ: Եթէ մարդու մը իրական տենջերը գիտնալինք մարդը կը ճանչնայինք:

Շատ մը մարդիկ թերեւս պիտի ըսեն թէ իրենց փափաքածը ինքնաարտայայտութիւն կամ ինքնաիրականացում է: Բայց պէտք է գիտնալ թէ ի՞նչ է այն եւր զոր կ'ուզենք արտայայտել՝ Նկատի առնելով որ մարդը նախնական վայրի վիճակէն կեանքի աւելի բարձր ոլորտներուն հասած է, չենք կրնար ուզել որ նախնական օրերուն մէջ ապրուած բայց հիմա իր արժէքը կորսնցուցած եւր արտայայտենք: Տր. Ճ. Ա. Հէտֆիլտ իր Հոգեբանութիւն եւ Բարբոս անունը գրքին մէջ կըսէ թէ ինքնարտայայտութիւն բառը անորոշ իմաստ մը ունի և կրնայ երկու կերպով ալ հասկցուիլ: Առաջին՝ թէ այն միւր բնագոյններուն ազատ և անկաշկանգ արտայայտութիւնն է. այս զաղափարը ազատականներու թեզն է որ կը հրապարէ ամէն դարու երկտասարդութիւնը: Եւ երկրորդ՝ թէ այն ամբողջ եւին ներդաշնակ արտայայտութիւնն է. ահա այն ատեն ինքնաարտայայտութիւնը ինքնաիրականացումի նոյնանիշ կը դառնայ: Մենք ահա այս երկրորդ իմաստով է որ իրաւունք ունինք ինքնաարտայայտութիւն պահանջելու, քանզի այն պարագային է որ մենք ճշմարիտ եւր, բանական և բարձրագոյն եւր արտայայտել ուզած կ'ըլլանք, որով միայն կարելի է գտնել ներդաշնակութիւն և խաղաղութիւն: Այսպիսի պահանջ մը ներկայացնել կը նշանակէ ճնշումը կամ նուաճումը և ո՛չ թէ յաղեցումը միւր շատ մը բնագոյններուն՝ որոնք բարբառիկ նախնական օրերուն իրենց կատարելագոյն արդար գոհացումը գտած էին:

Եթէ բնութեան զիմում պիտի կատարուի՝ պէտք է ան ամբողջ բնութեան կատարուի և

ո՛չ թէ անոր ստորին և նախնական արտայայտութիւններուն: Անկարելի է որ մենք խաղաղութիւն գտնենք՝ վայրենիի մը յատուկ հոգիի քրտոսային վիճակին վերադառնալով: Շատ անգամ վայրենիի կեանքը պարզ կը կոչուի: «Արտաքին կազմակերպումով կրնայ ըլլալ այն, բայց հոգեբանական կերպով շատ աւելի քրտոսային է քան քաղաքակիրթ մարդուն կարգաւորուած կեանքը, որուն բնագոյնին ոյժերը դէպի հասարակաց նպատակ մը ուղղուած են: Ծիշտ այս է վիճակը այն մարդուն՝ որ կը թոյլադրէ իր բնագոյններուն որ ազատօրէն արտայայտուին, քանզի այն խաղաղութիւն չի գտնիր կեանքի մէջ: Ամէն գործարանաւոր գոյութիւն, նաև մարդկային միտքը, կը յառաջդիմէ դէպի համադրութիւն մը, միութիւն մը, և չի գործեր միայն արտայայտութեան համար:»

Ինքնաիրականացումը ահա երկու իմաստ կը պարունակէ իր մէջ: Այն կը նշանակէ թէ մենք կը ճանչնանք և կ'ըմբռնենք ինչ որ մենք ենք. այն կը նշանակէ նաև իրականացումը կատարելալ եւին, զոր կը ձգտինք ունենալ մեծ զաղափարական մը հետապնդելով: Մենք չենք միայն այն եւր, զոր ունինք հիմայ, այլ նաև այն՝ զոր կարելի է սեննալ. և քանի անտես ընենք այս վերջին իրականութիւնը, այնչափ պիտի կորսնցնենք մաքի խաղաղութիւնը և երջանկութիւնը:

Ուրեմն՝ եթէ մենք մեր եւին ինքնաարտայայտութեան իրաւունքը կը պահանջենք, թէ՛ մեզի և թէ՛ մեր ընկեր արարածներուն հանդէպ պարկեշտ և արդար ըլլալու համար այն պէտք է ըլլայ բարձրագոյն եւր, զաղափարական եւր, Բրիտտոսի եւր: Ուրիշ ուի մէկը արտայայտել կը նշանակէ դաւաճանիլ մարդկային ցեղին: Չորրորդ Աւետարանի սկիզբը կը յայտնուի թէ մարդկութիւնը չիտակ կրնայ հասկցուիլ այն ատեն՝ երբ կ'ըմբռնուի թէ ան Աստուածայինի կողմէ ներբռնակալ է: Բոլոր դարերու մէջ գտնուած է բանական սկզբունք մը, աստուածային ձգտում մը, Ստեղծագործ Բան մը, որ ներսէն դէպի դուրս գործած է և քրտոսէն կարգաւորելով վիճակ ստեղծեր է: Մարդուն երեւնալէն շատ առաջ այս սկզբունքը կը գործէր, որուն բարձրագոյն արտայայտութիւնն է

մարդը, այն մարդը որ բարձրագոյնն է, այսինքն Քրիստոս: Քրիստոսի մէջ մենք կը գտնենք Բանը մարմին եղած և մարդկային կամքը Աստուծոյ կամքին հետ ներդաշնակութեան, համաձայնութեան բերուած: Շատ լուզիտինք թէ այս զաղափարականն ո՛րչափ հետի ենք: Բայց Աստուած, այս զաղափարականը, պէտք է մարդուն մէջ բնակի ինչպէս որ բնակեցաւ Քրիստոսի մէջ, և մարդիկ պէտք են Անոր կամքը կատարել ինչպէս որ Քրիստոս կատարեց: Այս զաղափարը մեր ստորին և հսապաշտական փափաքները սարսուռի կը մատնէ և կը ցամքեցնէ: Իւրաքանչիւր անարժան փափաք կը նշանակէ զԱստուած հեռացնել, զաղափարականին իրականացումը արգիլել, և մեր ճշմարիտ փրձակին բարձրանալը ձախողութեան մատնել:

Քանի կեանքը կը յառաջանայ Աստուծոյ Հոգին մեր փափաքները կ'առնէ, զանոնք կը մաքրէ և կը խորունկցնէ: Մենք մեր փափաքները կ'իրականացնենք մեր ակնկալութենէն շատ տարբեր կերպով: Մենք անպատ կ'երթանք յուսալով որ հովէն շարժող եղէկ մը կամ փափկօրէն հապուած մարդ մը պիտի տեսնենք, բայց ասոնց տեղ Յովհաննէս Մկրտիչ մը, մարգարէ մը, մարգարէէն շատ աւելի բարձր եղող մէկը կը գտնենք: Մենք առաջ մեր փափաքին կամ ակնկալութեան բուն նշանակութիւնը, մեծութիւնը չենք հասկնար: այդ մեր միտքին մէջ կը ծագի երբ մենք կ'ընդլայնինք: Մեր զիտցած բարձրագոյնին հաւատարմօրէն հնազանդիլ՝ պիտի մաքրէ մեր փափաքները, պիտի հոգեորականացնէ մեր ակնկալութիւնները, և պիտի առաջնորդէ մեզ աւելի ու աւելի աղօթելու միայն ան բանին համար որ Աստուծոյ սուրբ կամքին համաձայն է: «Եղիցի՛ կամք Քո» աղօթիկ կարենալէ առաջ՝ մենք պէտք է զաղափար մը ունենանք թէ ի՞նչ է այդ կամքը և ի՞նչ կը պահանջէ:

Կ. Ք. Հ.

ԽՈՐՀԵԼՈՒ ԶՈՐՍ ԿԵՐՊԵՐԸ

Դ.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԽՈՐՀՈՂՈՒԹԻԻՆ

Խորհելու երեք ձևերուն ծանօթացած ըլլալով հիմա կ'անցնինք չորրորդ տեսակ խորհելակերպին:

Ասիկա անուրջի պէս մեր փափաքներով և յոյսերով ուղղուող խորհելակերպ մը չէ, ո՛չ ալ պարզ որոշումներ տալ կամ մեր անձնական համոզումները պաշտպանել է. անիկա մեր միտքը փոփոխութեան ենթարկող խորհելակերպ մ'է: Ան է որ մարդկային կեանքը նախնական բարբարոսական տգէտ վիճակէն իր ներկայ մակարդակին հասցուցած է: Ներկայ այս չորրորդ խորհելակերպի մշակումով է որ աշխարհը կրնայ յաջողիլ ինքզինքը ազատելու վտանգէ ու կործանումէ: Անցեալի մէջ այս խորհելակերպը կը կոչուէր տրամաբանել (REASONING): Սակայն ժամանակի միջոցին այնչափ փոփոխումներ մուտք գտած են այդ բառին իմաստին մէջ՝ որ ան ալ դադրած է գործածութենէ: Այս խորհելակերպը կը կոչուի ստեղծագործ խորհողութիւն: Ահա թէ ինչպէս մենք շատ քիչ անգամ զայն կը գործածենք:

Երբեմն կը գտնուինք այնպիսի վիճակի մը մէջ որ ան մեզի կը թելադրէ պարզ դիտողութիւններ ընել զանազան իրերու վրայ, առանց խառնելու մեր անձնական նախամտածումները անոնց մէջ: Մենք —մեր միտքը— միայնակ կը թափառինք և կը նայինք, երբեմն տեսնելով ինչ որ բնաւ մեր ուշադրութիւնը չէր գրաւած նախապէս: Հետաքրքրութիւնը մեր ունէ մէկ պէտքին չափ որոշ է: Փափաք մը կ'ունենանք ուրիշի մը հեռագրին պարունակութիւնը հասկնալու կամ ցած ձայնով խօսակցութիւն մը լսելու: Դուն կրնաս ըսել թէ մեր հետաքրքրութիւնը կ'արթննայ մեր տարակոյսէն, նախանձէն և հետեւաբար մեր անձնական տարրերը անոր մէջ կը մտնեն: Վերջապէս ան միայն դրսի բաներով զբաղող բան մը չէ. ուրեմն: Այո՛, այդ առարկայի մէջ ճշմարտութիւն մը կրնայ գտնուիլ, բայց շատ անգամ կը տեսնենք որ մեր հետաքրքրութիւնը կ'արթննայ այնպիսի նիւթերու շուրջ որոնք ունէ չնչին առնջութիւն մ'իսկ չունին մեր անձին հետ, բայց միայն ծածուկ պահուած են մեզմէ ինչպէս պատմութիւնք պատմութիւն մը: Անծանօթ մէկու մը ամուսնութեան լուրը մի քանի շաբաթներ կը դրաղեցնէ մեզ: Վեպէն այս մտայնութիւնը կը կոչէ տխմար հետաքրքրութիւն: Աշխատինք աւելի լաւ բացատրել: Մեզմէ շատեր փողոցը քալելու ատեն սովորութիւն ունին

առջևէն եկողները մանրամասնօրէն դիտելու և անոնց մասին գաղափարներ չինելու: Շատեր սենեակ մը մտած չմտած, անոր մէջի զորքերուն պիներ կը կտրեն, անոր պատկերներուն արժէքը կը չափեն, և գրադարանի գիրքերէն կը գտան անոնց տէրը: Միւս կողմէն ալ կան մարդիկ որոնք իրենց անուրջին մէջ այնչա՛փ խորասուզուած են որ այդ թագուն ոյժը չունին այս տխմար հետաքրքրութեան համար: Հետաքրքրութիւնը տեսնուածին չափ ալ արհամարհելի բան մը չէ բնաւ, ինչու որ գրեթէ բոլոր մարդկային նշանաւոր ձեռնարկները անով յառաջ եկած են: Ան կրնայ լուրջ խուզարկութիւններու ծնունդ տալ և ծածուկ իրերը և իրողութիւնները մէջտեղ բերել: Եւ ահա ա՛ն է որ մերթ ընդ մերթ մեզ կ'առաջնորդէ սեղծիչ խորհեղութեան, որ բարեփոխելով ոգ լայնցնելով մեր տեսութիւններն ու ներշնչումները կրնայ մինչեւ իսկ մեզմէ զրօններուն կեանքերուն ապրել:

Ասկէ երկար տարիներ առաջ Ֆարատէյ անուն գիտնական մը կը փորձէր պզինձէ անիւ մը դարձնել մահակածեւ մազնիսի մը երկու ծայրերուն միջեւ: Ասոր արդիւնքը ըլլալով ելեքտրական հոսանք մը յառաջ եկաւ: Այս փորձը իր ժամանակին առեւտրականներուն յիմարութիւն կը թուէր. բայց ի՞նչ երկայիս ոյժ արտադրող մեքենաները, ռայնիմօները, որ այս փորձին ուղղակի արդիւնքն են, յանկարծ այս գիշեր կենալու ըլլան, այս օրուան առեւտրականը խաւարամած փողոցներէն իր մութ տունը վերադառնալու ատեն մեռեալ ինքնաշարժերու պիտի դարձնուէր: Նա պիտի տեսնէր թէ առանց նախկիններուն ստեղծիչ մտածումներուն՝ դժուար պիտի ըլլար այսօր առեւտուր ընել:

Ապագայ քաղաքակրթութեան յառաջացման ու զարգացման աղբիւրը տկար կերպով հասկցուած, կամ սխալ ըմբռնուած է: Մինչդեռ այս նիւթը պէտք է լրջօրէն ձեռք առնուի մեր զգրոցներուն մէջ. շատ դժուար գործ մ'է առաջին անգամ մեր բազմաթիւ հին սխալ համոզումները քանդել, նոր մարդու և իր կարողութիւններու մասին նոր գաղափարներ գնել: Ամեն զար ունեցած է իր արգելիչ ազդակները, և ասոնք եղած են ո՛չ միայն բլթամիտ ստորին ամբոխներ, ա՛յլ մեր բարոյա-

խօսները, մեր երրորդ խորհեղութեան պաշտպան աստուածաբանները և մեծամեծ փիլիսոփաները՝ որ անդադար կը քաջալերեն արդէն իսկ տիրապետող տղիտութիւնը և անհետացնելու կը ջանան սեղծիչ խորհեղութեան:

* * *

Կը խորհիմ թէ մենք — ևս ալ մէջը ըլլալով — բաւական հետաքրքիր չենք մեր ապրելակերպին մասին: Մեզի ամեն բան բնական կուգայ, շատ քիչ բաները մեզի վարմանք կը պատճառեն: Երջանկութիւնը ուրիշ բան չէ այլ վարմանալու ունակութիւն մը: Իրաւ ամեն դարու մէջ տիրապետող քաղաքակրթութեան պայմանները այդ դարուն մէջ ապրողներուն բնական և անխուսափելի թուած են: Կովը չի հարցնէր թէ ի՞նչպէս եղաւ որ իրեն չոր անկողին մը տըրուեցաւ: Կատուի ձագը յախճապակեայ ամաններու արտադրութեան մասին առանց բան մը գիտնալու կը ցատկէ անոնց մէջի կաթը լափելու: Նոյնպէս՝ մենք մարդերս մեր նախաճաշը կ'ընդունինք, մեր հեռագիրները կ'ստանանք և նուազախումբերը կը վայելենք, մեր շոգեկառքերն ու ինքնաշարժները մեր զգրոցներն ու գիրքերը, մեր եկեղեցիներն ու բարոյական կանոնները կը վայելենք շունի մը կամ կատուի մը անմեղութեամբ ու պարզութեամբ: Մենք կարողութիւնը ունինք որ ընկերու ըրածները ընդունելու, վայելելու, բայց առանց շնորհակալութեան ըզգացումի մը: Մենք մեր խելութիւնովը այս խաղէն բաժին չենք առնիր: Եւ յաճախ բաւական անտեղեակ ենք թէ իրաւ այս տեսակ խաղ մը կը խաղցուի:

[Վերջ]

Բ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ,
Հետեւողթմ. Ճ. Հ. ԲԱՊԻՆՍԸՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՊԶՏԻԿՑՈՂ ԲԱՆՏԸ

Միջին դարուն՝ տարօրինակ կերպով շինուած զնգան մը կար, երբ բանաստեղծալը առաջին անգամ հոն մտնէր բանտը շատ պայծառ և հաճելի կերեւար իրեն, սակայն մի քանի օր վերջը երկաթէ շինուած պատերը յամբօրէն կը կծկուէին, իւզոտած ծխնինքրու վրայէն մետաղեայ տախտակները ան-

ձայն կը մօտենային իրարու: Հետզհետէ ան զժուարութեամբ կրնար շնչել, երթալով տեղը նեղ կուգար պառկելու. օր մը վերջը՝ տեղը հագիւ կը բաւէր կենալու. վերջապէս կ'ըստիպուէր խելացնոր կատաղութեամբ իր ձեռքերովը երկաթեայ պատերը հրել, որպէս զի զինք չճղմեն: Բայց բսլորովին իզուր, պատերը յամբօրէն և անգթօրէն իր վրայ կը փակուէին, վերջ տալով իր կեանքին:

Մեր կեանքի տարիներն ալ այսպիսի բանտի մը պատերուն կը նմանին: Անոնք նախ պայծառ և գեղեցիկ են, սակայն ամեն օր բանտը կը պղտիկնայ, անոր պատերը կը նեղնան մեր շուրջը, ամէն ժամ՝ որ իր պատեհութեամբ կ'անցնի առիթ մը կը պակսեցնէ մեզմէ յաւիտենական կեանքը շահելու համար. ամէն երակազարկին երկաթեայ պատերը աւելի մօտէն կը շրջապատեն մեր հոգիները:

Սիրոյ ամեն մէկ ձայնը, հոգիին ամեն մէկ ջանքը՝ պահապան հրէշտակ մըն է մեր բանտին անցքին քով, եկած բանալու համար դուռը որ ազատիս: Այս բանտէն ազատման միակ միջոցը Գրիստոսն է: Առանց Գրիստոսի կեանքը ակնախարութիւն և պատրանք է, որ կը վերջանայ մթութեամբ և մահուամբ: Գրիստոս դուռն է ազատութեան, երանութեան, ուրախութեան և այն ամեն բաներուն որոնք վեհ են և երկնային:

Պ. Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վեր. Հայկազուն Սանդախտ, Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցիի նախկին հովիւը և ներկայիս Հ. Բ. Ը. Միութեան գործիչը, ատենէ մը ի վեր Սուրիա կը գտնուի իբրեւ Հ. Բ. Ը. Մ. ի պատուիրակ: Յարգելի հիւրին Հալէպ այցելութեան առթիւ ժողովուրդը առիթը ունեցաւ ունկնդրելու իրեն. Օգոս. 12ին Ազիզիյէի Հայ Աւետ. Եկեղեցիի բեմէն, և Օգոս. 15ին Նոյն Եկեղեցիի Ե. Ք. Զանից Միութեան մասնաւոր հաւաքոյթին մէջ, ուր փութացեր էին երկսեռ երիտասարդութիւնը վայելիլու «Ջանք»ի վրայ իմաստալից ատենախօսութիւնը:

—Վեր. Կ. Սթանպօլեան, Աթէնքի շրջանին աւետարանիչը, Պէյրութ կը գտնուի ատենէ մը ի վեր, ուր եկած է այցելելու իր ըն-

տանեկան պարագաները: Շատ փափաքելի էր որ Հալէպցիք ալ վայելէին անոր ներշնչող ներկայութիւնը:

—Հալէպի Ազիզիյէ Հայ Աւետ. Եկեղեցիի խառն ժողովը գնահատելի պաշտօնաւոր յղացիւ էր հարսանեկան և նշանտուքի հանդիսութիւններուն համար կանոնադիր մը պատրաստել: Ուրախութեամբ կը յայտնենք որ յիշեալ կանոնագիրը թէ՛ հայերէն և թէ՛ թրքերէն լեզուներով պատրաստուած և եկեղեցիին կողմանէ ալ ընդունուած է:

—Պէյլանի քարոզիչ Տիար Կ. Գրքեհաշարեան Սեպտեմբերի մէջ Աթէնք պիտի երթայ: «Սքուլ ալ Րիլիճըն»ի մէջ տարի մը ուսանելու համար:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

[Շար. և վերջ]

Աթիլայի մահով Եւրոպա չհանդարտեցաւ. մի քանի տարիներ վերջ բարբարոս Յրանքներ Փարիզը պաշարեցին. Փարիզի բերդերը լաւ ամրացած էին, բայց սովը սոսկալի էր: Ժընէվիէվի շուրջը անօթութեանէ մեռնող կ'իւն և մանուկները տեսնելով աչքերը արցունքով լեցուեցան և կարծես սիրտը կտոր կտոր եղաւ: Անմիջապէս այս արիասիրտ հովիւ աղջիկը պղտիկ նաւակի մը մէջ մտաւ և նաւարկից Սէն ի վրայ գետն ի վար, և պարիսպներէն դուրս ելաւ որ թշնամի բանակը ձեղքելով դուրսէն օգնութիւն հասցնէ:

Նա այցելեց մերձակայ քաղաքները, ուղևորեց զանոնք որ օգնութեան փութան, սովամահներուն օգնութիւն հասցնեն: Նա կատարեալապէս յաջողեցաւ իր այս ձեռնարկին մէջ: Յրանքները կարող չէին արգիլել ժընէվիէվի նաւակով երթեկութիւնը: Ամէն բան յաջող կ'երթար, սակայն իր մէկ բացակայութեան միջոցին զժրաստաբար Փարիզ գրաւուած էր: Յրանքներու հրամանատարը՝ Հիլպէրիք կատարեալապէս կը վախնար այս խորհրդաւոր աղջիկէն, և հրամայեց որ քաղաքին բոլոր դռները պահակներ դրուին եւ չ'ըլլայ որ այդ աղջիկը քաղաք մտնէ: Ժընէվիէվ լուր առաւ որ քաղաքին մեծ մարդիկը բռնուած են և Հիլպէրիք մտադրած է սպաննել զանոնք: Բայց այս անգամ անոնք բարբարոսային խժգժութիւններ, անգթութիւններ ընելէ դադրած էին, չէին կործաներ, այլ

հաստատուելու կ'աշխատէին: Գիւղացիները ապա երթեկուծութիւններ կ'ընէին քաղաքէն ներս և դուրս: Ժընէվիէվ օր մը գիւղացի աղջկան մը տարազով և քօղով պահապանները առանց կասկածի մատնելու Փարիզ մտաւ և ուղղուեցաւ առանց վախի զէպի հին Հռովմէական սրահները, ուր Հիւպերիք վայրենի խնճոյք մը կը սարքէր: Երբոր ժընէվիէվ սրահներուն հասաւ՝ քաղքենի կեանքի չվարժուած Ֆրանք գինուորներ տեսաւ, որոնց երկայն մազերը ձիու պոչի պէս կ'իջնէին մինչև իրենց մէջքը, անոնք ունէին լաւ ածիլուած դէմքեր՝ անուիլի պեխերով, անոնք հագած էին սեղմ կաշիէ հագուստներ և իրենց լայն գօտիներուն մէջ սուրեր կը կրէին: Ժընէվիէվ կին մը ըլլալով հանդերձ չվախցաւ, այլ աւելի մօտեցաւ անոնց, որոնք սեղաններու շուրջ շարուած եկեղեցիներէ կողոպտուած սուրբ ամաններով գինի կը խմէին, ոմանք իրենց պատերազմական երգերը կ'երգէին, իսկ ուրիշներ կը մրափէին: Այսպիսի տեսարան մը պէտք էր ան ու սարսափ ազդել սովորական կնկան մը, սակայն ժընէվիէվ իր հաւատքին մէջ հաստատ, իր սիրաւը Աստուծոյ վախով և զօրութեամբ լիցուն, իր հրեշտակային աշերը աստուածային շանթահար սուրբ կրակով բոցավառուած՝ կանգնեցաւ Հիւպերիքի առջև: Չենք գիտեր թէ ան ի՛նչ խօսեցաւ Հիւպերիքին: Միայն սաչափը գիտենք որ Հիւպերիք չափազանց վախցած շնորհեց ինչ որ ժընէվիէվ պահանջեց, ազատութիւն բանտարկեալներուն և գութ անարկեալ ժողովուրդին: Զարմանալի չէ որ ժողովուրդը

այդ ժամանակէ ի վեր ժընէվիէվը կը նկատէ Փարիզի Սուրբ Պաշտպանուհին:

Նա տեսաւ Հիւպերիքի զաւկին Գլօվիսին ամուսնութիւնը քրիստոնեայ իշխանուհիի մը հետ: և ապա անոր քրիստոնեայ ըլլալը: Նա տեսաւ Նօթր Ծամ, Աէն Տընիս և Ս. Մարթին եկեղեցիներու հիմունքը: Ան իր՝ կարևոր բաժինը ունեցաւ բարբարոս իշխանները Քրիստոնէութեան առաջնորդելու մէջ, անոնց հաւատք, սէր, սրբութիւն ներշնչելով: Տեսական աղօթքի և բարեգործութեան երկար կեանք մը ապրելէ յետոյ Քլոսթր թագաւորէն երեք ամիս վերջը մեռաւ 512ին, 89 տարեկան՝ հասակին մէջ:

ՆՈՐ ԱՒԵՏ.Ի ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

1. ԲԱԶՄԱԿԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ, Բանաւսիրական—Գիտական—Բարոյական, բաժնիւղինն է՝ Ծիլին 12—Տոլար 3: Հասցէ.—
ST. LAZARE, VENISE (Italie)

2. ՍԻՈՆ, Կրօնական—Գրական—Բանաւսիրական Հայ Ամսագիր, Պաշտօնական հրատարակութիւն Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐԲԵՐ

4. ՅՈՅԶԵՐ ԵՒ ԽՈՅԶԵՐ. (Փրօֆ. Կարապետ Սողիկեանի գանկէն), կազմեց Նշան Պէկեան, հրատարակութիւն և տպագրութիւն Հայ Դպրոցի: Հասցէ.—

Ecole Arménienne, BEGNINS
Vaud, SUISSE,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տեսական Բարեխառնութիւն

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒՍԵՆԵՐ

Բարոյականութիւն և Կրօն

ՎԵՐ. Կ. Յ.

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մարդուն Փախաճներ

Կ. Բ. Հ.

Խորհելու Չորս Կերպեր

Ր. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Պատկերային Բաներ

ԹԻԳՄ. Պ. Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկշաբաթաթերթ:

Արտօնատէր, Վ. Կ. Յարութիւնեան
Պատասխանատու Տնօրէն, Տ. Ճ. Խորհրդարան
ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ
Արտասահման » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AWEDAPER
B. P. 287
ALEP SYRIE